

Մարդու իրավունքների կնոջ ուսուցումը

Ղեկավարության ուսուցում

/ Ընտրված բաժանմունքների անգլերեն թարգմանություն /

Կանայք Կնոջ Մարդու Իրավունքների համար Ստամբուլ, Թուրքիա

Բնագիր Ղեկավարությունը թուրքերեն լեզվով բաղկացած է 330 էջից: Սա անգլերեն թարգմանությունն է՝ կազմված Ցանկից, նախաբանից և Ներածության բաժանմունքներից

Կանայք Կնոջ Մարդու Իրավունքերի համար

Կանայք Կնոջ Մարդու Իրավունքերի համար ինքնավար ոչ կառավարական կազմակերպություն է, որ ապահովում է կանանց՝ որպես ազատ մարդկանց և հավասար քաղաքացիների ակտիվ մասնակցությունը ժողովրդավարական և խաղաղ հասարակական կարգի հաստատման և իրականացման մեջ: Կազմակերպությունը հիմնադրվել է 1993թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մասին Կոնֆերենցիայից անմիջապես հետո, որը տեղի է ունեցել Վիենայում, որտեղ ընդունված էր, որ կանանց իրավունքները մարդու իրավունքների անբաժանելի մասն են:

Կազմակերպության հիմնական նպատակները կայանում են նրանում, որպեսզի հետագոտեն կանանց իրավունքների պաշտպանության կամ խախտման իրավաբանական, ավանդույթային և համընդհանուր ընդունված օրենքները և պրակտիկան, տարբեր հրատարակությունների միջոցով տարածեն հավաքած ինֆորմացիան՝ կանանց և լայն զանգվածի, որպեսզի բարձրացնել գիտակցությունը նման հարցերի շուրջ: 1999թ. Կազմակերպությունը ստացել է << Leading Solutions >> մրցանակը AWID-ից իր սեռական հավասարության և սոցիալական արդարության առաջընթացի համար էական և ինովացիոն ջանքերի համար:

Կազմակերպությունը Նամագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ կապված մարդու իրավունքների, ժողովրդավարության, խաղաղության, սեռային հիմնախնդիրների և զարգացման հետ: Այդ խմբերից որոշները ընդգրկում են ՄԱԿ-ի Կանանց համար Զարգացման Հիմնադրամը (UNIFEM), Առողջության Միջազգային Իգական Կռալիցիան (IWHC), Կանանց համար Գլոբալ Հիմնադրամը (GFW), Իսլամական և Մերձավոր արևելյան Օրենքի Կենտրոնը (CIMEL) և Իգական Գլոբալ Առաջնության Կենտրոնը (CWGL) :

Բովանդակություն

Կանայք Կնոջ Մարդու Իրավունքների համար

Նախաբան

Ներածություն

Մարզում

1. Ողջույն, Կանացի Քրավունքների Ուսուցման Ծրագրի Ներածություն
2. Կանանց՝ մարդու իրավունքները
3. Սահմանադրական և Քաղաքացիական իրավունքները
4. Բռնությունը կանանց հանդեպ և Բռնությունը ընտանիքում
5. Բռնության ընդդեմ ռազմավարություններ
6. Կանանց տնտեսական իրավունքները – Բաժանմունք 1
7. Կանացի տնտեսական իրավունքները – Բաժանմունք 2
8. Հաղորդակցության հմտություններ – Բաժանմունք 1
9. Հաղորդակցության հմտություններ – Բաժանմունք 2
10. Դաստիարակությունը և երեխայի իրավունքները
11. Կանայք և սեռականությունը – Բաժանմունք 1
12. Կանայք և սեռականությունը – Բաժանմունք 2
13. Ռեպրոդուկտիվ իրավունքներ
14. Կանայք և քաղաքականությունը
15. Ֆեմինիզմ և կանացի շարժում
16. Կանացի կազմակերպություն

Նախաբան

Ժողովրդավարական համակարգում՝ հիմնված օրենքի գերակայության վրա, մարդկանց համար էական է իմանալ և օգտագործել իրենց իրավունքները , որոնք համարվում են անհրաժեշտ հասարակությունում: Թուրքական հասարակության նահապետական կառուցվածքը և ի ծնե սեռական խտրականությունը կանանց համար դարձնում է այդ գործոնը ավելի պարտադիր: Չնայած նրան, որ կանայք ստացել են հավասար իրավաբանական իրավունքներ Թուրքական Հանրապետության հիմնադրման օրից՝ սոցիալական ապահովությունը և կազմակերպական նախաձեռնությունը , որոնք թույլ կտան իրականացնել այդ իրավունքները ամենօրյա կյանքում, չափազանց սահմանափակված են: Օրինակ՝ շատ կանայք ամուսնանում են հակառակ իրենց կամքի, ինչպես նաև գոյություն ունի the berdel համակարգը, երբ կանանց գնում են որպես ապրանք և պարտադիր համարվում է կուսության ստուգումը՝ որոշ համընդհանուր ընդունված մեթոդներ և սովորույթներ , որոնք մինչև այսօր էլ ներգործություն ունեն կանանց կյանքի վրա:

Պատմականորեն <<իրավունք>> հասկացության հասունացումը պետք է հետևի անհատականության զարգացմանը: Մարդու համար՝իրավունք հասկացության հիմնական նախնական պայմանն այն է , որպեսզի ի վիճակի լինել զարգացնել անհատականության զարգացումը և դրա հետ ունենալ որոշակի ազատության գոտի, որ հանդիսանում է անձեռնմխելի: Թուրքիայում, սակայն, կանանց մեծամասնությանը թույլատրված չէ <<լինել անհատ>>՝ իրավաբանական, սոցիալական, տնտեսական կամ մշակութային ոլորտներում: Ավելի ճիշտ, նրանք միշտ բախվում են ամենօրյա սահմանափակումներին և խտրականություններին՝ բխող իրենց դերերից որպես <<աղջիկ - երեխա>>, <<կին>> կամ <<մայր>>: Հետևաբար, թուրքական Սահմանադրությունը երեշխավորում է սեռերի հավասարություն, սակայն շատ կանայք զրկված են նման իրավունքներից՝ որպես ազատ մարդիկ և հավասար քաղաքացիներ:

Բախվելով վերը շարադրվածին՝ մենք զարգացրել ենք Մարդու՝ Կանանց Իրավունքների Ուսուցման Ծրագիրը կանանց համար և սկսել ենք առաջին փորձնական ծրագրերը Ստամբուլի երկու մարզերի ետնախորշերում՝ Umraniye և Gulsuyu, 1995 - 96թթ.: 1998թ. Սկսած մենք համագործակցել ենք սոցիալական աշխատողների, հոգեբանների հետ՝ կանանց լայն զանգված ներգրավելու և օգնելու համար; Մարդու՝ Կանանց Իրավունքների Ուսուցման Ծրագրի հիմնական նպատակներից է՝ սեռային խտրականության և կանանց իրավունքների խախտման հասկացությունների զարգացումը և ընդգծել ինքնավար կանանց խմբերի ու կանանց շարժումների կարևորությունը նրանց դեմ պայքարում:

Ներածություն

Մարդու Իրավունքների Կանացի Ուսուցումը , Ուսուցանող Ղեկավարությունը պատրաստ էր օգնել նրանց, ովքեր ավարտում են ծրագրի առաջին փուլը՝ որպես ծրագրի օգնականներ, որպեսզի օգնեն նրանց երկրորդ փուլում, երբ նրանք անց են կացնում իրենց տեղական խմբերը:

Ղեկավարության հիմնական մասը բաղկացած է 16 մոդուլներից: Դրանք են՝

1. Ողջույն , Կանացի Իրավունքների Ուսուցման Ծրագրի Ներածություն և Պահանջումների Գնահատում
2. Կանանց՝ մարդու իրավունքները
3. Սահմանադրական և Քաղաքացիական իրավունքները
4. Բռնությունը կանանց հանդեպ և Բռնությունը ընտանիքում
5. Բռնության ընդդեմ ռազմավարություններ
6. Կանանց տնտեսական իրավունքները – Բաժանմունք 1
7. Կանացի տնտեսական իրավունքները – Բաժանմունք 2
8. Հաղորդակցության հմտություններ – Բաժանմունք 1
9. Հաղորդակցության հմտություններ – Բաժանմունք 2
10. Դաստիարակությունը և երեխայի իրավունքները
11. Կանայք և սեռականությունը – Բաժանմունք 1
12. Կանայք և սեռականությունը – Բաժանմունք 2
13. Ռեպրոդուկտիվ իրավունքներ
14. Կանայք և քաղաքականությունը
15. Տեմինիզմ և կանացի շարժում
16. Կանացի կազմակերպություն